ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի օգոստոսի 18-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 14.08.2025թ.-ին ստացված հարցադումները և դրանց վերաբերյալ 18.08.2025թ. տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում 1</u> <u>(ստացվել է 14.08.2025թ., ժամը 20:01-ին)</u>

«Հարգելի պատվիրատու, Խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը՝ Հարց 1. Մատակարարման ժամկետը (60 օր) հաշվարկվե՞լու է պայմանգրի կնքման ամսաթվից, թե՞ ֆինանսավորումից և համաձայնագիր կնքելու ամսաթվից հաշվարկած: Հարց 2. Ընդունելի է, եթե առաջին SSD-ն լինի ոչ QLC, այլ TLC (վերջինս ըստ էքսպերտների կարծիքների ավելի հուսալի են և արագագործ): Հարց 3. 2-րդ կոշտ սկավառակը եթե լինի SSD, ապա նրա տեսակի վրա որևէ պահանջ կա՞; Հարց 4. " կարգավորող ոտիկ՝ համակարգչի էկրանը բարձրացնելու, իջեցնելու և 180 աստիճան պտտելու հնարավորությամբ" պահանջի մեջ ի՞նչպես պետք է հասկանալ 180 աստիճան պտտելու հնարավորությունը: Դա նու՞յնն է, ինչ սկզբնական դիրքից աջ և ձախ 90 աստիճան պտտելու հնարավորությու՞նը: Եթե ոչ, ապա ո՞րն է 180 աստիճան պտտելու հնարավորության իմաստը:»:

<u>Պարզաբանում 1</u>

1.1. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) Հավելված 5-ի հավելված N 2–ով՝ «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»–ով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված. «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր:». հիշյալ հավելված N 2–ի ծանոթագրություններում նշված է, որ. «** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից»: Միևնույն ժամանակ Հրավերի Հավելված 5-ի 8.15.-րդ կետով սահմանված է, որ. «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:», իսկ 8.1. կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ. «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը»:

1.2. Հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «.... հիշողություն՝ հիմնական կոշտ սկավառակ՝ առնվազն 1 x SSD 500GB, M.2 2280 Gen4 QLC». առաջարկվող ապրանքները բոլոր պարամետրերով պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

1.3. Հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «.... Երկրորդ հիշողություն՝ կոշտ սկավառակ՝ HDD կամ SSD՝ առնվազն 1TB». առաջարկվող ապրանքները բոլոր պարամետրերով պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

1.4. Հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «.... կարգավորող ոտիկ՝ համակարգչի էկրանը բարձրացնելու, իջեցնելու և 180 աստիճան պտտելու հնարավորությամբ». մասնավորապես 180 աստիճան պտտելու հնարավորությունը ենթադրում է համակարգչի էկրանը հորիզոնական դիրքից ուղղահայաց դիրքի բերելու հնարավորություն (90 աստիճան ժամացույցի սլաքի ուղղությամբ և 90 աստիճան ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ պտտելու հնարավորություն):

Հարցադրում 2 (ստացվել է 14.08.2025թ., ժամը 20:26-ին)

«Հարգելի պատվիրատու, Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցը՝ Ընդունե՞լի է, եթե "առնվազն՝ 1xHDMI Out Port" ելքը ապահովվի DP<->HDMI փոխարկիչի միջոցով:»:

Պարզաբանում 2

Ընդունելի չէ:

Հարցադրում 3 (ստացվել է 14.08.2025թ., ժամը 20:53-ին)

«Հարգելի պատվիրատու, խնդրում ենք պարզաբանել հետևլալ հարցերը՝ Հարց1. Ըստ "պրոցեսոր՝ առնվազն Intel Core i7 կամ AMD Ryzen, տուրբո հաճախականությունը՝ առնվազն՝ 4.9 GHz" պահանջի, համակարգչի պրոցեսորը կարող է լինեն նաև AMD Ryzen, որի տուրբո հաճախականությունը լինի առնվազն 4.9 GHz է: Խնդրում ենք հաստատեք, կամ հերքեք այս պահանջը: Հարց 2, Պայմնագրի նախագծի հավելված 2-ում կա նետևյալ նշումը՝ "* Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ": Տվյալ հրավերի շրջանակներում մասնակցից պահանջվե՞լու է նման փաստաթղթեր:

Պարզաբանում 3

3.1. Հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «.... պրոցեսոր՝ առնվազն Intel **Core i7 կամ AMD Ryzen**, տուրբո հաճախականությունը՝ առնվազն՝ 4.9 GHz, առնվազն 10C, առնվազն 16T, առնվազն 24MB Smart Cache...», այսինքն՝ պրոցեսորը կարող է լինել առնվազն Intel Core i7 կամ AMD Ryzen՝ հաշվի առնելով, որ առաջարկվող պրոցեսորի բոլոր պարամետրերը (ինչպես նաև առաջարկվող ապրանքների բոլոր պարամետրերը) պետք է համապատասխանեն Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

3.2. Հրավերի տեքստը ստեղծվում է eauction.armeps.am համակարգի կողմից, և «* Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ» նախադասությունը դրվում է հիշյալ համակարգի կողմից՝ ինքնաշխատ եղանակով. սույն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Դատական դեպարտամենտի կողմից գնվելիք ապրանքի տեխնիկական բնութագրով նման պահանջ սահմանված չէ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: